ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2024թ.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ
2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N755-Լ որոշմամբ հաստատված ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) կանոնադրությամբ (այսուհետև՝ Կանոնադրություն) և այլ իրավական ակտերով՝ կազմվել է Տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն): Հաշվետվությունն արտացոլում է հաշվետու տարում կատարված աշխատանքները, իրավիճակի զարգացումն ու փաստացի տվյալների համեմատականը նախորդ հաշվետու ժամանակաշրջանների հետ:

Տեսչական մարմինը գործում է ՀՀ Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների, իրավական այլ ակտերի և Կանոնադրության հիման վրա: Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով առողջապահության, ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի բնագավառի իրավական ակտերի, ինչպես նաև կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների պահպանման ապահովումը: Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ենթակա հինգ ոլորտներում ՀՀ օրենքների ու այլ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունն ու կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

2023 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների հետ միաժամանակ Տեսչական մարմինն իրականացրել է նաև չպլանավորված աշխատանքներ, մասնավորապես՝ պետական կառավարման համակարգի մարմիններից ստացված Տեսչական մարմնին վերապահված վերահսկողության ոլորտներին վերաբերող տեղեկատվության, քաղաքացիներից կամ տնտեսավարող սուբյեկտներից ստացված դիմումների, թեժ գծով ստացված զանգերի, զանգվածային լրատվամիջոցների մոնիթորինգի արդյունքների հիման վրա իրականացված, Տեսչական մարմնի կողմից

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

տնտեսավարող սուբյեկտներին տրված կարգադրագրերի հետևողականությանն ուղղված վարչական վարույթներ և վերստուգումներ, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պլանին համաձայն իրականացված՝ դեղերի շրջանառության ոլորտում նյութական պահուստին ներկայացվող պահանջների պահպանմանն ուղղված ստուգումներ:

I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը ներկայացված է հավելված 1-ում:

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տեսչական մարմնի գործունեության 2023 թվականի տարեկան ծրագրի կատարման ընթացքը ներկայացված է հավելված 2-ում:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Տեսչական մարմինը Կանոնադրության 10-րդ կետի համաձայն, օրենքով սահմանված դեպքերում և կարգով վերահսկողության ենթակա՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում ապահովում է ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը վերահսկողության ենթակա ոլորտներում:

Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունն իրականացվել է Տեսչական մարմնի կողմից 2020-2023

թվականների ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքների հիման վրա՝ «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության սկզբունքներն ապահովելու, ինչպես նաև՝ առավել ռիսկային ուղղությունների և խախտումների պարբերականության բացահայտման նպատակով:

Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2022 թվականի նոյեմբերի 30-ի 16-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2023 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների» ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր): Ծրագրի շրջանակներում 2023 թվականի ընթացքում նախատեսվել էր իրականացնել թեմատիկ ստուգումներ 712 տնտեսավարող սուբյեկտների մոտ (ըստ հինգ ոլորտների), որոնցից՝ 656 բարձր, 104 միջին և 40 ցածր ռիսկայնությամբ:

Տեսչական մարմնի կողմից հաշվետու տարում վերահսկողության ենթակա տնտեսավարող սուբյեկտներում ռիսկերի նվազեցման ուղղութունը միտված է եղել վերահսկողական աշխատանքները առավել արդյունավետ իրականացնելուն և թիրախների ընտրությանը, ինչպես նաև օրենքով նախատեսված իրավասությունների շրջանակներում տրված նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ հանձնարարականի (կարգադրագրի) պահանջների կատարման վերահսկողությանը:

Արդյունքում՝ 2023 թվականին 961 տնտեսավարող սուբյեկտներում իրականացվել և ավարտվել է թեմատիկ ստուգում, այդ թվում՝ 336 վերստուգում (շուրջ 35%), խախտումները վերացնելու նպատակով տրվել է 466 (այդ թվում վերստուգման՝ 71) հանձնարարական (կարգադրագիր):

Ծրագրի շրջանակներում հրապարակվել է ստուգում իրականացնելու մասին 701 հանձնարարագիր:

Ծրագրային ստուգումներից բացի, 2023 թվականի ընթացքում հարուցվել է 3501 վարչական վարույթ, այդ թվում դիմումի հիման վրա՝ 612, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 2889, որից 214-ը՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

Ստուգումների վերաբերյալ տեղեկատվությունը (ըստ ոլորտի, ստուգման տեսակի, քանակի և հիմքի) առավել մանրամասն ներկայացված է Հաշվետվության V գլխում, իսկ վարչական վարույթների վերաբերյալ՝ VI գլխում:

«Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հանրային սննդի օբյեկտներում (որպես հատուկ թիրախային խումբ ընտրված կազմակերպություններ) ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակների առկայության և դրանց սահմանված պահանջների պահպանման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում նկատվում է դրական միտում՝ նշված օբյեկտների կողմից խախտումները վերացնելու կամ խախտումները կանխարգելելու ուղղությամբ: Օրենքով սահմանված պահանջների նկատմամբ հետևողականությունը նկատելի է նաև այն հանրային սննդի օբյեկտներում, որտեղ վերահսկողություն չի իրականացվել:

Աշխատանքային իրավունքի բնագավառում Պետական եկամուտների կոմիտեի կողմից անօրինական աշխատանքի (առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի աշխատող) վերաբերյալ ստացվող բազմաթիվ տեղեկությունների հիման իրականացվող վարչական վարույթների արդյունքում գործատուներին տրվել են պարտադիր կատարման ենթակա կարգադրագրեր՝ համապատասխան աշխատողի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ, եթե վերահսկողության ընթացքում արձանագրվել է այդ անձանց տվյալ գործատուի մոտ փաստացի աշխատելու հանգամանքը:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառում շինարարության ծավալների ավելացման հետ միաժամանակ ավելացել է դժբախտ դեպքերի թիվը: Արձանագրվել են նաև շինարարության ընթացքում կատարվող աշխատանքների արդյունքում հարակից բնակելի շինությունների բնակարաններում թափանցող աղմուկի մակարդակի գերազանցման դեպքերի թվի աճ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

Դեղերի շրջանառության ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքներով արձանագրվել են դեղերի ներմուծում իրականացնող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետություն օրենքի խախտմամբ (առանց ներմուծման կամ համապատասխանության հավաստագրի) դեղեր ներմուծելու և չգրանցված դեղեր ներմուծելու դեպքեր:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ համայնքներում խմելու ջրի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում պարզվել է, որ մի շարք դեպքերում տվյալ բնակավայրերում խմելու ջրի ջրամատակարարման համակարգերը չեն շահագործվում ինչպես համայնքների, այնպես էլ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից: Արդյունքում՝ համայնքի ղեկավարներին տրվել են կարգադրագրեր՝ բնակչությանը սանիտարական կանոններին համապատասխան խմելու ջրով ապահովելու կամ քաղաքացիների կողմից խմելու նպատակով ջրօգտագործման դադարեցման վերաբերյալ, սակայն այն ջրաղբյուրները, որից օգտվում են բնակիչները, մնացել են նույն վիճակում, և դրանց մաքրման վերաբերյալ կարգադրագրեր չեն տրվել: Համայնքի բնակիչները օգտվում են նշված ջրաղբյուրներից, ինչն էլ ռիսկեր է պարունակում ջրային գործոնով պայմանավորված վարակիչ հիվանդությունների բռնկումների առաջացման տեսանկյունից:

IV. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում ըստ վերահսկողության ենթակա ոլորտների իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ: Թեժ գծով ստացվող զանգերին տրվել են պատասխաններ և պարզաբանումներ: Խորհրդատվական գործունեության շրջանակներում լուսաբանվել են ոլորտներին վերաբերվող ընդհանուր բնույթի հարցեր, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, հարցերին տրվել է հստակ պատասխան կամ պարզաբանում՝ իրականացնելով 6613 (2022թ.՝ 6487, 2021թ.՝ 5662, 2020թ.՝ 5616) խորհրդատվական աշխատանք, որից 1244՝ տնտեսավարող սուբյեկտներին տրված խորհրդատվություն և գրություն, 5252 (2022թ.՝ 5635, 2021թ.՝ 4411, 2020թ.՝ 2500)՝

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

«Թեժ գիծ» ծառայությամբ ստացված հարցերի պատասխան և պարզաբանում, և 117՝ ֆեյսբուքյան էջով ստացած հարցերի պատասխան:

Տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվություն

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են հետևյալ խորհրդատվական աշխատանքները.

- ստաֆիլակոկարության վերաբերյալ գրություններ՝ անձին ժամանակավորապես աշխատանքի չթույլատրելու վերաբերյալ,
- խմելու ջրի նմուշներում արձանագրված շեղումների վերաբերյալ գրություններ համայնքների ղեկավարներին,
- գրություններ կազմակերպությունների, առողջության պահպանման առաջնային օղակի տնօրեններին՝ վարակիչ հիվանդությունների դեպքերի արձանագրման հետ կապված վարակի տարածման կանխարգելման նպատակով,
- տնտեսավարող սուբյեկտների աշխատողների պարբերական բժշկական զննությունը կազմակերպելու համար գրություններ ղեկավարներին,
- գրություններ դպրոցի տնօրեններին՝ դպրոցներում օդի ջերմաստիճանի ցուցանիշները սանիտարական կանոններով և նորմերով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար,
- տեղեկատվություն տնտեսավարող սուբյեկտներին՝ Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի, ինչպես նաև դրանցում կատարված փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ,
- տեղեկատվություն դեղատնային գործունեություն իրականացնող կազմակերպություններին՝ չգրանցված, ոչ օրինական ճանապարհով ձեռք բերված, անորակ կամ որակի պահանջներին չհամապատասխանող կամ պիտանիության ժամկետն անցած կամ գրանցումն ուժը կորցրած ճանաչված, ՀՀ օրենսդրության խախտմամբ ներմուծված կամ հետ կանչված դեղերի վերաբերյալ,
- գործատուների հետ քննարկվել են վերջիններիս կողմից ուղարկված նախնական և պարբերական բուժզննման ենթակա աշխատակիցների ցանկերը՝ ՀՀ կառավարության

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

2004 թվականի 1089-Ն որոշման պահանջներն ապահովելու նպատակով, արդյունքում՝ ճշտված և համաձայնեցված ցանկերը վերադարձվել են գործատուներին,

- տնտեսավարող սուբյեկտների համար կազմակերպվել են դասընթացներ,
- Տեսչական մարմնի աշխատակիցները մասնակցել են մի շարք սեմինար-քննարկումների,
- քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների հարցերին տրվել են պարզաբանումներ և պատասխաններ,
- վերահսկողական գործընթացում (ստուգում, վարույթ) մշտապես իրականացվել են խորհրդատվական և իրազեկման աշխատանքներ, տնտեսավարող սուբյեկտներին տրվել է Տեսչական մարմնի լիազորությունների և վերահսկողության ոլորտներին առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն:

«Թեժ գիծ» ծառայություն

«Թեժ գծով» ստացված 5252 զանգերի բաշխումն ըստ ոլորտների՝



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107



	Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ	Աշխատանք. իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջ. պահպանման և անվտանգ. ապահովման	Դեղերի շրջանառության ոլորտ	Բժշկական օգնության և սպասարկման ոլորտ	այլ
2020թ.՝ 2500	1399	678	34	19	370
2021թ.՝ 4411	1669	1306	68	71	1297
2022թ.՝ 5635	583	3242	110	127	1573
2023թ.՝ 5252	313	2944	96	144	1755

Տնտեսավարողների կողմից բարձրացված հարցերի մեծ մասը վերաբերել է.

- աշխատանքի պայմանների և աշխատողների իրավունքների պահպանմանը,

- աշխատավայրում անվտանգության տեխնիկական կանոնակարգերին, հրահանգավորմանը,

- բժշկական զննությունների անցկացման ընթացակարգերին,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխություններին,

- աշխատանքի էական պայմանները փոփոխելու հիմքին և ընթացակարգին,

- ամենամյա արձակուրդի տրամադրման կարգին,

- վարժական հավաքների ներգրավված աշխատողների վարձատրությանը,

- օտարերկրյա քաղաքացիների՝ ՀՀ- ում աշխատանքի կատարման իրավական հարաբերություններին

- դեղերի գրանցման, ոչնչացման և իրացման նորմերին

- բժշկական փաստաթղթերի և բուժաշխատողների՝ շարունակական մասնագիտական զարգացման հետ կապված հարաբերություններին:

Իրազեկման միջոցառումների իրականացում

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում՝ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են կազմակերպվել մամուլի հաղորդագրությունների տեսքով, «Թեժ գիծ» ծառայությունով, հարցազրույցների ու ասուլիսների կազմակերպմամբ, Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջով և ֆեյսբուքյան էջով ստացված հարցադրումներին ի պատասխան, մարզային և մայրաքաղաքում կազմակերպված ֆոկուս խմբերի հետ իրազեկման սեմինարների միջոցով:

Տնտեսավարողների համար իրազեկման նյութ է պատրաստվել և տեղադրվել պաշտոնական կայքէջում՝ ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակների առկայության և դրանց սահմանված պահանջների, ինչպես նաև այդ պահանջները խախտելու համար նապատեսված պատասխանատվության միջոցների մասին:

Հանրությանն ու տնտեսավարող սուբյեկտներին մշտապես իրազեկվել է Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ընդունված նոր իրավական ակտերի և գործող իրավական ակտերում կատարված փոփոխությունների մասին:

Հիմք ընդունելով ամառվա ամիսներին աղիքային վարակիչ հիվանդությունների, սննդային գործոնով պայմանավորված թունավորումների դեպքերի թվի աճը, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ Երևանի քաղաքապետարանում մեկնարկել էր եռօրյա կանխարգելիչ իրազեկում-սեմինարների շարք՝ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող նախադպրոցական կազմակերպությունների պատասխանատու պաշտոնատար անձանց համար, որի վերաբերյալ համապատասխան նյութը լուսաբանվել է:

Շինարարական հրապարակներում դժբախտ դեպքերը բացառելու նպատակով տնտեսավարող սուբյեկտներին հորդորվել է խստագույնս պահպանել աշխատողների

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

առողջությունն ու անվտանգությունը ապահովող կանոնները, նորմերը, ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները:

Տեսանյութեր են հրապարակվել «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» ՀՀ օրենքի շրջանակներում Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական աշխատանքների ընթացքի վերաբերյալ և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օրվան նվիրված, որոնք պատրաստվել են «Լուրեր» լրատվականի կողմից:

ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի աջակցությամբ պատրաստվել է «Անվտանգության կաննոները շինարարությունում» թեմայով անիմացիոն տեսանյութ, որը հրապարակվել է Տեսչական մարմնի ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև հեռարձակվել է համապետական, մայրաքաղաքային և մարզային ծածկույթ ապահովող հեռուստաալիքներով:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի վերահսկման ոլորտներում իրականացվել է իրազեկման 190 աշխատանք, ստորև նշված ուղղություններով.



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am



Կանխարգելիչ գործողություն

Տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների շրջանակներում՝ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրականացվել է 6803 կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝ 190 իրազեկման աշխատանքներ տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար, 1244 խորհրդատվական գործունեություն, 5252 «Թեժ գծով» ստացված զանգ, 117 ֆեյսբուքյան էջով ստացած հարցում:

V. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 1130 թեմատիկ ստուգում (այդ թվում վերստուգում՝ 370) ավարտվել է 961 ստուգում (այդ թվում վերստուգում՝ 336), ուժը կորցրած է ճանաչվել 26 հանձնարարագիր, չեղյալ է ճանաչվել 21, կարճվել է 3, իսկ 119 ստուգում հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ ընթացքի մեջ է: Ստուգման արդյունքում կազմվել է 564 ակտ և 397 ստուգման տեղեկանք, տրվել է խախտումների և

թերությունների վերացման 466 հանձնարարական (կարգադրագիր): Որպես պատասխանատվության միջոց, կիրառվել է վարչական տույժ՝ նախազգուշացում և տուգանք, ընդունվել է տույժ նշանակելու մասին 738 որոշում, ընդհանուր առմամբ սահմանվել է 421,503,992 ՀՀ դրամ տուգանք:



2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 712 թեմատիկ ստուգումից հրապարակվել է 701 հանձնարարագիր, ինչպես նաև՝ 20 հանձնարարագիր նյութական պահուստի օրենսդրության պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված պահանջների պահպանման ապահովման նպատակով, 1 դիմումի հիմքով և 1 քննչական կոմիտեի գրությամբ ներկայացված զեկուցագրի հիման վրա: Այդ թվում ըստ վերահսկողության ենթակա ոլորտների.

2023 ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ											
ՈԼՈՐՏ	Հանձնարարագիր	Մնացորդ 01.01.2023		Ստուգման արդյունքներ							Կարգադրագիր
				Ընդամենը	Ակտ	Տեղեկանք	Ուժը կորցրած ճանաչել	Չեղյալ ճանաչելու մասին	Ստուգումը կարճել	Ընթացքի մեջ	
Աշխատանքային իրավունք	**162**	**0**		**162**	107	25	2	3	0	25	92
Աշխատանքի անվտանգություն	**153**	**0**		**153**	116	11	5	1	1	19	78
Բժշկական օգնության և սպասարկման	**25**	**0**		**25**	15	8	0	1	0	1	14
Դեղերի շրջանառության	**160**	**0**		**160**	79	55	9	5	1	11	61
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**122**	**0**		**122**	89	21	3	1	0	8	89
Աշխատանքային անվտանգություն, Աշխ. իրավունք	**31**	**0**		**31**	24	0	0	0	0	7	21
Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ. անվտ.	**36**	**0**		**36**	23	4	0	0	0	9	19
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ	**4**	**0**		**4**	1	2	0	0	0	1	0
Դեղերի շրջ., Բնակ. սանիտարահամ. անվտ.	**3**	**0**		**3**	2	1	0	0	0	0	2
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ, Բնակ. սանիտարահամ. անվտ	**4**	**0**		**4**	2	0	0	0	0	2	2
Դեղերի շրջ, Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**1**	**0**		**1**	1	0	0	0	0	0	1
Նյութական պահուստ	**20**	**0**		**20**	2	12	3	0	0	3	2
Դիմումի հիմքով (անվտանգություն)	**1**	**0**		**1**	1	0	0	0	0	0	1
Քր.դատ (Քննիչի որոշմամբ)՝ դեղ	**1**	**0**		**1**	1	0	0	0	0	0	1
Ընդամենը	**723**	**0**		**723**	463	**139**	**22**	**11**	**2**	**86**	**383**
2022 ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼ ԵՎ ԱՎԱՐՏՎԵԼ Է 2023 ԹՎԱԿԱՆԻՆ)											
Աշխատանքային իրավունք	**0**	**20**		**20**	12	0	1	7	0	0	6
Աշխատանքի անվտանգություն	**0**	**11**		**11**	7	1	3	0	0	0	3
Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**0**	**2**		**2**	0	0	0	2	0	0	0
Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ. անվտ.	**0**	**3**		**3**	2	0	0	0	1	0	2
Դեղերի շրջ., Բնակ. սանիտարահամ. անվտ.	**0**	**1**		**1**	1	0	0	0	0	0	1
Ընդամենը	**0**	**37**		**37**	22	**1**	**4**	**9**	**1**	**0**	**12**
2023 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄ											
Աշխատանքային իրավունք	**24**	**0**		**24**	1	23	0	0	0	0	1
Աշխատանքի անվտանգություն	**29**	**0**		**29**	4	20	0	0	0	5	1
Բժշկական օգնության և սպասարկման	**4**	**0**		**4**	0	3	0	0	0	1	0

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

Դեղերի շրջանառության	**10**	**0**		**10**	2	3	0	0	0	5	2
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**78**	**0**		**78**	1	73	0	0	0	4	1
Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**4**	**0**		**4**	1	3	0	0	0	0	1
Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ. անվտ.	**5**	**0**		**5**	1	1	0	0	0	3	1
Դեղերի շրջ., Անվտանգություն, Իրավունք	**1**	**0**		**1**	0	0	0	0	0	1	0
Ընդամենը	**155**	**0**		**155**	10	**126**	**0**	**0**	**0**	**19**	**7**
2022 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄ (ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 2023 ԹՎԱԿԱՆԻՆ)											
Աշխատանքային իրավունք	**27**	**11**		**38**	3	33	0	1	0	1	4
Աշխատանքի անվտանգություն	**51**	**13**		**64**	30	31	0	0	0	3	26
Բժշկական օգնության և սպասարկման	**26**	**7**		**33**	6	24	0	0	0	3	6
Դեղերի շրջանառության	**7**	**1**		**8**	3	4	0	0	0	1	3
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**34**	**3**		**37**	10	26	0	0	0	1	10
Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**7**	**1**		**8**	3	5	0	0	0	0	3
Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ. անվտ.	**9**	**2**		**11**	7	4	0	0	0	0	7
Դեղերի շրջ., Բնակ. սանիտարահամ. անվտ.	**1**	**0**		**1**	0	1	0	0	0	0	0
Նյութական պահուստ	**2**	**1**		**3**	1	1	0	0	0	1	0
Ընդամենը	**164**	**39**		**203**	63	**129**	**0**	**1**	**0**	**10**	**59**
2021 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄ (ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 2023 ԹՎԱԿԱՆԻՆ)											
Աշխատանքի անվտանգություն	**0**	**1**		**1**	1	0	0	0	0	0	0
Բժշկական օգնության և սպասարկման	**6**	**0**		**6**	3	0	0	0	0	3	3
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**1**	**2**		**3**	1	2	0	0	0	0	1
Ընդամենը	**7**	**3**		**10**	5	**2**	**0**	**0**	**0**	**3**	**4**
2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄ (ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 2023 ԹՎԱԿԱՆԻՆ)											
Աշխատանքի անվտանգություն	**1**	**1**		**2**	1	0	0	0	0	1	1
Ընդամենը	**1**	**1**		**2**	1	**0**	**0**	**0**	**0**	**1**	**1**
ԸՆԴԱՄԵՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ / ՎԵՐՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ											
Աշխատանքային իրավունք	**213**	**31**		**244**	123	**81**	**3**	**11**	**0**	**26**	**103**
Աշխատանքի անվտանգություն	**234**	**26**		**260**	159	**63**	**8**	**1**	**1**	**28**	**109**
Բժշկական օգնության և սպասարկման	**61**	**7**		**68**	24	**35**	**0**	**1**	**0**	**8**	**23**
Դեղերի շրջանառության	**177**	**1**		**178**	84	**62**	**9**	**5**	**1**	**17**	**66**
Բնակչության սանիտարահամաճ. անվտ.	**235**	**5**		**240**	101	**122**	**3**	**1**	**0**	**13**	**101**
Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**42**	**3**		**45**	28	**8**	**0**	**2**	**0**	**7**	**25**

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

Բժշ. օգն. և սպաս, Բնակ. սանիտարահամ. անվտ.	**50**	**5**		**55**	33	**9**	**0**	**0**	**1**	**12**	**29**
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ	**4**	**0**		**4**	1	**2**	**0**	**0**	**0**	**1**	**0**
Դեղերի շրջ., Բնակ. սանիտարահամ. անվտ.	**4**	**1**		**5**	3	**2**	**0**	**0**	**0**	**0**	**3**
Բժշ. օգն. և սպաս, Դեղերի շրջ, Բնակ. սանիտարահամ. անվտ	**4**	**0**		**4**	2	**0**	**0**	**0**	**0**	**2**	**2**
Դեղերի շրջ, Աշխ. անվտանգություն, Աշխ. իրավունք	**2**	**0**		**2**	1	**0**	**0**	**0**	**0**	**1**	**1**
Նյութական պահուստ	**22**	**1**		**23**	3	**13**	**3**	**0**	**0**	**4**	**2**
Դիմումի հիմքով (անվտանգություն)	**1**	**0**		**1**	1	**0**	**0**	**0**	**0**	**0**	**1**
Քր.դատ (Քննիչի որոշմամբ)՝ դեղ	**1**	**0**		**1**	1	**0**	**0**	**0**	**0**	**0**	**1**
Ընդամենը	**1050**	**80**		**1130**	564	**397**	**26**	**21**	**3**	**119**	**466**

2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների թիվ՝ 712, այդ թվում.

- ավարտված ստուգում – 586, որից 459՝ ակտ, 127՝ տեղեկանք,
- ընթացքի մեջ՝ 83,
- ուժը կորցրած՝ 19,
- չեղյալ ճանաչված՝ 11,
- կարճված՝ 2,
- չհրապարակված՝ 11 (տնտեսավարող սուբյեկտներում ստուգում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագրեր հրապարակման ենթակա չէին՝ ստուգաթերթի և/կամ նորմի բացակայության՝ 7, տնտեսավարող սուբյեկտի գործունեությունը դադարեցրած՝ 4):

VI. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

Տեսչական մարմնում 2023 թվականի ընթացքում ստացվել է 833 (2022թ՝ 699, 2021թ՝ 654, 2020թ՝ 180) դիմում և բողոք, որոնցից օրենքով սահմանված կարգով 37-ը վերադարձվել է, 52-ը վերահասցեագրվել է, 132-ին տրվել է համապատասխան պարզաբանում, 612 դիմումի հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ: Այսպես, ըստ ոլորտների.

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107



Օրենքով սահմանված կարգով հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից հարուցվել է 3501 վարչական վարույթ, այդ թվում դիմումի հիման վրա՝ 612, Տեսչական մարմնի նախաձեռնությամբ՝ 2889, որից 214-ը՝ կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով:

Աղյուսակում ներկայացված են 2023 թվականի ընթացքում Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը՝ 2020-2022թթ. համեմատությամբ և ըստ Տեսչական մարմնի վերահսկողական ոլորտների: Տվյալների համաձայն՝ 2023 թվականին հարուցված վարչական վարույթների թիվը 2022 թվականի համեմատությամբ աճել է 69,5%-ով, 2021 թվականի համեմատությամբ՝ 139,5%-ով, իսկ 2020 թվականի համեմատությամբ՝ 284%-ով:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթների քանակը					
Հ/Հ		2020 թվական	2021 թվական	2022 թվական	2023 թվական
1	բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ	292	424	341	500
2	բժշկական օգնության և սպասարկման ոլորտ	187	228	225	1387
3	դեղերի շրջանառության ոլորտ	283	277	255	140
4	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ոլորտ	149	533	1245	1474
	ԸՆԴԱՄԵՆԸ	911	1462	2066	3501

Հարուցված 479 վարչական վարույթի արդյունքում տրվել է խախտումները վերացնելու նպատակով տրվել են առաջադրանք տալու վերաբերյալ կարգադրագրեր, 3001 վարույթ կարճվել է, այդ թվում՝ 194-ը՝ դիմումից հրաժարվելու հիմքով, իսկ մնացածն ընթացքի մեջ է: Որպես պատասխանատվության միջոց, կիրառվել է վարչական տույժ՝ նախազգուշացում և տուգանք, ընդունվել է տույժ նշանակելու մասին 1327 որոշում, ընդհանուր առմամբ սահմանվել է 570,746,993 ՀՀ դրամ տուգանք:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am



	բնակչության սանիտարահամաճ. անվտանգ.սպասարկմ.	աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջ. պահպանման	դեղերի շրջանառության	բժշկական օգնության և սպասարկման
2020թ.՝ 911	292	149	283	187
2021թ.՝ 1462	424	533	277	228
2022թ.՝ 2066	341	1245	255	225
2023թ.՝ 3501	500	1474	140	1387

ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի մայիսի 27-ի «Ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչի օգտագործման արգելքի և սահմանափակումների մասին տեղեկատվություն պարունակող ցուցանակներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 14-Ն հրամանի հավելվածով սահմանված պահանջների պահպանումը պարզելու նպատակով Տեսչական մարմնի նախաձեռնությամբ հարուցվել է **1145** վարչական վարույթ:



ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

VII. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐ ԵՆ ՀԱՆՎԵԼ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացված գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են հիմնականում տնտեսավարող սուբյեկտների կողմից օրենսդրության պահանջների չիմացությամբ: Խախտումներն ըստ ոլորտների.

Դեղերի շրջանառության ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն ու շեղումներն են.

- ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» N 867 որոշման հավելված 3-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» կետով, հավելված 3-ի 43.1-րդ սահմանված պահանջներ,

- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 8-րդ մասի և ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի N 1080-Ն որոշման հավելված 1-ի 51-րդ կետի պահանջներ,

- «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, 16-րդ հոդվածի 1-ին, 19-րդ հոդվածի 1-ին մասի, 20-րդ հոդվածի 1-ին մասի, 21-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի 23-րդ հոդվածի 2-րդ մասով, 25-րդ հոդվածի 3-րդ և 28-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի պահանջներ:

Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 1936 որոշման պահանջներ,

- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 31-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի պահանջներ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են.

- ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր,

- ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր, ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-Ա2-1 սանիտարական նորմեր և կանոններ,

- ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման, թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր,

- ՀՀ առողջապահության նախարարի 2006 թվականի օգոստոսի 16-ի N 933-Ն հրամանով հաստատված «Ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումներ (ՌՀԷՄՃ) N 2.1.8-010-06 սանիտարական կանոններ և նորմեր,

- ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր,

- ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 48-Ն հրամանով հաստատված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծման մշակմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

- ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 12-ի N 236-Ն հրամանով հաստատված «Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեղակայմանը, կառուցվածքին և շահագործմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» №2-III-2.1. սանիտարական նորմեր և կանոններ,

- ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 17-ի N 21-Ն հրամանի հավելվածով հաստատված «Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմատիվներ N 3.3.1-003-20,

- ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի N 59-Ն հրամանի հավելվածով հաստատված «Վիրուսային հեպատիտներ Բ-ի, Ց-ի համակցված համաճարակաբանական հսկողություն» սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր N 3.1.1-030-2015:

Աշխատանքային իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն ու շեղումներն են՝

- Աշխատողների աշխատանքից ազատման դեպքում գործատուի կողմից չտրամադրվող դրամական փոխհատուցումներ (վերջնահաշվարկ, արձակման նպաստ) խախտվում են նաև աշխատանքից ազատատելուց պայմանագրի լուծման ժամկետներ, տնտեսավարողների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ իրագործում,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 85-րդ հոդվածի պահանջներ՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չեն կնքվել աշխատանքային պայմանագրեր,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի պահանջներ՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հաշվարկվել և չի վճարվել վերջնահաշվարկ,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի պահանջները՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում չի հաշվարկվել և չի վճարվել աշխատավարձ,

- ՀՀ աշխատանքային օրենսգրքի 249-րդ հոդվածի պահանջներ,

- ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 255-րդ հոդվածի պահանջներ,

- ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 102-րդ հոդվածի պահանջներ,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

- ՀՀ աշխատանքային օրենսգիրքի 171-րդ հոդվածի պահանջներ,

- ՀՀ կառավարության 2004թ. հունիսի 15-ի N 1089-Ն որոշման պահանջներ,

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 26-ի N 21-Ն հրամանի պահանջներ:

VIII. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացվել է 29 առաջարկություն (2022թ.՝ 19): Միաժամանակ, քննարկվել և կարծիք է ներկայացվել տարբեր գերատեսչությունների կողմից ներկայացված 28 նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ (2022թ.՝ 24):

Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկներից և նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքներից առավել կարևորվում են.

1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» նախագիծ,

2. «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

3. «Դեղերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

4. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

5. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

6. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

7. «Կենսաանվտանգության և կենսաապահովության մասին» ՀՀ օրենքի նախագիծ,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

8. «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի ընդունման և աշխատանքային պայմանագրերի կնքման թվային հարթակի ներդրման մասով,

9. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին առաջարկություն, որով առաջարկվել է 169.8-րդ հոդվածը վերախմբագրել՝ կատարված խախտմանը համապատասխան պատասխանատվության միջոց կիրառելու նպատակով,

10.«Առողջապահության ոլորտի լաբորատոր համակարգի զարգացման ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1237-Լ որոշման հավելված 2-ով հաստատված առողջապահության ոլորտի լաբորատոր համակարգի զարգացման ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների միջոցառումների ծրագրի նախագիծ:

11. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման մեջ լրացում կատարելու մասին, «Միջազգային վարկանիշներում ՀՀ ընթացիկ դիրքերի բարելավման վրա ազդող գործոնները մշտադիտարկող աշխատանքային խմբի ստեղծման վերաբերյալ» ՀՀ վարչապետի որոշման նախագծեր,

12.«Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության 2023-2035 թվականների արդյունքային շրջանակի» նախագիծ,

13.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» նոր օրենսգրքի նախագիծ և այլն:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am

IX. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեսչական մարմնի դեմ բերվել է 423 բողոք, որից 183 բողոք՝ Տեսչական մարմին, 240 բողոք՝ դատարան:

183 վարչական բողոքից 34-ը բավարարվել է/բեկանվել է (18.6%):

Տարվա ընթացքում կայացվել է 224 վճիռ/որոշում՝ դատական բողոքարկված գործերի վերաբերյալ, որից 143-ը՝ ի օգուտ բողոքաբերի (63.8%): 2022թ. կայացվել էր 148 վճիռ/որոշում, որից 107-ի դեպքում՝ ի օգուտ բողոքաբերի (72.3%): 2021թ. կայացվել էր 48 վճիռ/որոշում, որից 36-ի դեպքում՝ ի օգուտ բողոքաբերի (75%):

Ներկայացված բողոքները վերաբերվել են օրենքով սահմանված վարչական վարույթի ընթացակարգային նորմերի խախտումներին, մասնավորապես՝ վարչական ակտ կայացնելիս գործում առկա ոչ բոլոր նյութերն են օբյեկտիվ և բազմակողմանի ուսումնասիրվել, չեն հավաքագրվել և հաշվի առնվել բոլոր վերաբերելի ապացույցները, հաշվի չի առնվել իրավախախտի մեղքի բացակայությունը, վարչական ակտերը չեն եղել որոշակի և հստակ, լսված լինելու իրավունքի խախտումներ՝ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է առանց իրավախախտողի ներկայության: Առկա են եղել նաև ոլորտային բնույթի խախտումների վերաբերյալ բողոքներ, օրինակ, տնտեսավարողը դեղի վրա առկա դրոշմապիտակի առկայությունը համարել է դեղի գրանցված լինելու վերաբերյալ ապացույց, առկա են եղել աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորության վիճարկում, ինչպես նաև՝ բողոք Տեսչական մարմնի ստուգումների տարեկան ծրագրում ընգրկվածության իրավաչափության վերաբերյալ:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53, էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am